ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը մեծ նշանակություն ունի բանկային համակարգում մրցակցության, հաճախորդներին արագ և ապահով ծառայություններ մատուցելու, ֆինանսական միջոցների հասանելիության և արդյունավետ գնագոյացման համար: Այն կախված առանձին տեսակներից իր մեխանիզմների և կիրառվող գործիքների առումով, ինչպես նաև այլ առանձնահատկություններով պահանջում է ներդրման և զարգացման ուրույն մոտեցումներ:

Բանկային համակարգում Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրների վերհանումն ու դրանց ուղղությամբ լուծումների առաջադրումը առավել է կարևորվում ՀՀ-ում, երբ շատ դեպքերում առկա չեն օրենսդրական հստակ կարգավորումներ, այն իր զարգացվածությամբ հետ է մնում միջազգայնորեն սահմանված միջին ցուցանիշներից: Ֆինանսական տեխնոլոգիաները մեծ նշանակություն ունեն հասարակության բոլոր խմբերի ընդհանուր ֆինանսական, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման և բազմաթիվ խնդիրների վերացման համար: Չնայած Հայաստանում բանկային համակարգի զարգացվածությանը՝ ֆինտեխի, թվայնացման և էլեկտրոնայնացման առումով առկա են լուծում պահանջող խնդիրներ, հետևաբար ոլորտի առանձնահատկություններից բխող հետազոտությունները և դրանց հիման վրա կատարվող առաջարկությունները կնպաստեն համակարգի զարգացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է համակողմանիորեն հետազոտել ֆինտեխի դերը բանկային համակարգում, գնահատել ՀՀ-ում դրա զարգացման նախադրյալներն ու արդի վիճակը, նաև, հիմնվելով ֆինտեխի զարգացման միջազգային լավագույն փորձի համալիր վերլուծության արդյունքների վրա, վերհանել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման խնդիրներն ու մշակել դրանց լուծմանն ուղղված առանձին ընդհանրական առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հետազոտել ֆինտեխի բովանդակությունը, դերն ու նշանակությունը բանկային համակարգում և տնտեսությունում,
- Ուսումնասիրել ֆինտեխի զարգացման ընթացքը, միտումներն ու մարտահրավերները առանձին երկրներում,
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման արդի վիճակը,
- Հետազոտել ՀՀ-ում ֆինտեխի ներդրման և զարգացման նախադրյալները,
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման, խորացման և ընդլայնման առանցքային խնդիրները,
- Ներկայացնել ՀՀ-ում ֆինտեխի զարգացման առանձին խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանը միտված առաջարկություններ:

Ատենախոսության հիմնական կառուցվածքային մասերը պայմանավորված են առաջադրված խնդիրներով, դրանք հանդիսանում են միմյանց լրացնող տրամաբանական հաջորդականություն կազմող բաղադրիչներ: Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են.

Ատենախոսության առաջին՝ «Ֆինտեխի էությունը, զարգացման հեռանկարները» գլխում հեղինակը ներկայացրել է ֆինտեխի էությունը, տարբեր սահմանումներ և բովանդակությունը: Անդրադարձ է կատարվել ֆինտեխի առավելություններին և հնարավորություններին, ինչպես նաև քննարկել է բանկային համակարգի համար ֆինտեխի մարտահրավերները:

Երկրորդ՝ «Ֆինտեխի միջազգային փորձի վերլուծություն» գլխում քննարկվել են ֆինտեխի զարգացման հորիզոնները, կատարվել է միջազգային փորձի վերլուծություն,

ներկայացվել է բանկային ոլորտում տեխնոլոգիաների ներդրման առկա վիճակը, ինչպես նաև հայաստանյան բանկային համակարգի զարգացման միտումներն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Ֆինտեխ միջավայրը ՀՀ-ում և դրա զարգացման հեռանկարները» գլխում ներկայացվել է ՀՀ ֆինտեխ միջավայրը, թվային ֆինանսական ծառայությունների զարգացման մակարդակը և վեր են հանվել ՀՀ-ում ֆինտեխ ներդրման և զարգացման ուղղություններն ու խնդիրները:

Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու առաջարկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ատենախոսությունում կատարված վերլուծությունների միջոցով ստացվել են գիտական մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

1. Գործոնային վերլուծության մեթոդի կիրառմամբ մշակվել է ֆինտեխ զարգացման համաթիվ (ընդհանրական գնահատական), որը ներառում է ֆինտեխ զարգացման տարբեր ուղղությունների առանձին գնահատականներ: Դրա կիրառմամբ գնահատվել է ՀՀ-ում ֆինտեխ զարգացման մակարդակը:
2. Ռեգրեսիոն վերլուծության գործիքակազմի կիրառմամբ հետազոտվել է տարբեր պարամետրերի (ծախսային, ինստիտուցիոնալ և այլն) ազդեցությունը ֆինտեխ զարգացման ներուժի և մակարդակի վրա, արդյունքում՝ վեր են հանվել մի շարք գործոններ, որոնք ֆինտեխի վրա ունեն նշանակալի ներգործություն, և որոնց թիրախավորումը կարող է ներառվել ոլորտի զարգացմանը միտված ծրագրային փաստաթղթերում:
3. Ֆինտեխի զարգացման միջազգային լավագույն փորձի հետազոտության արդյունքները տեղայնացնելով ՀՀ-ում առկա իրողությունների պայմաններում՝ վեր են հանվել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման առանձին մարտահրավերներ, խոչընդոտներ և հիմնախնդիրներ, մասնավորապես՝ առանձին ուշադրություն է հատկացվել իրավական, կառավարչական, ֆինանսական, մշակութային հենք ունեցող խնդիրներին:
4. Հետազոտվել են ՀՀ-ում կենսաչափական նույնականացման առկա խնդիրները, առաջարկվել է կենսաչափական նույնականացման մեթոդ, որը հիմնված է

համակարգերի հինգ չափանիշների՝ ճշգրտության, արդյունավետության, կիրառելիության, անվտանգության և գաղտնիության վրա: Կենսաչափական նման համակարգերի ներդրումը կարևոր նախադրյալ է հանդիսանում ֆինտեխ առանձին բաղադրիչների, մասնավորապես՝ P2P վարկավորման, քրաուդֆանդինգային հարթակների զարգացման համար:

5. Առաջարկվել է բաց բանկային գործունեության համակարգի ներդրման փորձնական մոտեցում և երեք փուլերից կազմված ալգորիթմային կառուցվածք:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Հեղինակը, աշխատանքում քննարկելով ֆինտեխի տարբեր սահմանումներ, փորձ է արել տալ սեփական ձևակերպումը, որը, սակայն, կարծում ենք ավելի շատ պնդում է, քան սահմանում. «Առանց տեխնոլոգիական հիմքի անհնար է ֆինանսական այնպիսի ծառայությունների և ապրանքների մատուցումը հաճախորդներին, որը կբնութագրվի նորարարությամբ և ավանդական ծառայությունների թվայնացմամբ»:
- Աշխատանքում հեղինակը, որպես նորագույն թվային տեխնոլոգիաների, ներդրումների ներգրավման և ֆինտեխի զարգացման համար անհրաժեշտ քայլերից արդարացիորեն մատնանշում է քրաուդֆանդինգային հարթակները, սակայն Հայաստանի պարագայում այդ հարթակների վերաբերյալ արված վերլուծություններն ու գնահատականները որոշ դեպքերում ոչ բավարար են: Բացի դա, հեղինակը այդ հարթակները կարծես հակադրության մեջ է դնում բանկային համակարգի հետ, մինչդեռ դրանք դիտարկվում են որպես բանկերին և դասական արժեթղթերի շուկային լրացնող ֆինանսավորման մեխանիզմ, հատկապես սթարթափների և ՓՄՁ-երի համար, քանի որ ապահովում են թողարկման մեղմ պայմաններ և ներդրման լայն հնարավորություններ (24/7, հեշտ և արագ): Գնահատականները կլինեին ավելի ամբողջական, եթե անդրադարձ լիներ ըստ բաժնային, պարտքային, նվիրատվության և պարգևատրման քրաուդֆանդինգի տեսակներին և ՀՀ-ում սակավաթիվ, սակայն որոշակի գործունեություն ծավալող/ած հարթակներին (օրինակ՝ One Armenia, AYO, fundr.am):
- Հեղինակը «Գնիր հիմա, վճարիր հետո» ֆինտեխ լուծումը համարում է ՀՀ ֆինանսական հատվածում նորարար և մրցակցային պրոդուկտ՝ նշելով, որ դրա՝ ժամանակին ներդրումը ընկերությունների կողմից կնպաստի շուկայի առավել մեծ մասնաբաժին ունենալուն: Աշխատանքում անդրադարձ է կատարվում այս լուծման առավելապես

դրական կողմերին, մինչդեռ աշխատանքն առավել համապարփակ կլիներ, եթե անդրադարձ լիներ դրա օրեցօր ավելացող ռիսկերին և կատարվեր որոշակի համեմատական վերլուծություն: Հեղինակը նաև վկայակոչում է Affirm ընկերության կատարած հետազոտության արդյունքները՝ դրանք տարածելով նաև Հայաստանի վրա. այս մասով ևս կարիք կա լրացուցիչ քանակական և որակական հիմնավորումների:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ հիշատակված բացթողումները և ցանկությունները էականորեն չեն անդրադառնում աշխատանքի վրա, և ատենախոսության ուսումնասիրությունից ընդհանուր եզրակացությունը հետևյալն է.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է: Ատենախոսությունում ուսումնասիրության են ենթարկվել Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում: Ատենախոսը կարողացել է հիմնավորված մեթոդներով լուծել առաջադրված խնդիրները: Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսության ստացված արդյունքներն ունեն գործնական և տեսական նշանակություն: Դրանք կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող մասնագետների, ասպիրանտների և ուսանողների համար, ինչպես նաև կարող են կիրառվել ՀՀ բանկային համակարգի մասնակիցների, թվային ֆինանսական ծառայություններ մատուցող կամ շուկա մուտք գործել փորձող տեխնոլոգիական ընկերությունների կողմից իրենց ռազմավարական ծրագրերը կազմելիս, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Կառավարության կողմից՝ ՀՀ բանկային համակարգում մրցակցության բարձրացման ուղիներ մշակելու, տնտեսական աճի ապահովման, իրավական կարգավորումների մշակման գործընթացներում և երկրում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը բարձրացնելու համար:

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունը իր արդիականությամբ, հիմնավորվածությամբ ու գիտական մակարդակով համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական

ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Տնտեսագիտության թեկնածու **Ս.Ս. Միքայելյան**
21 հունիսի 2024թ.

Պարոն Ս.Ս. Միքայելյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության

Գլխավոր քարտուղար **Հ.Նասիբյան**

21 հունիսի 2024թ.